ՆԵԵՏ 34

1. Մեղքերովս, Տե՛ր, ահա Քեզի կուգամ,
Կոտրած սրտով, Տե՛ր, հիմա Քեզի կուգամ:
Տե՛ր, շատ լավ գիտեմ՝ կտեսնես իմ սիրտս,
Մեղքերով ճնշված, մեղապարտ իմ սիրտս:

Մեղքերովս, Տե՛ր, ահա Քեզի կուգամ,
Կոտրած սրտով, Տե՛ր, հիմա Քեզի կուգամ:

2. Խիղճս կտանջե զիս ցորեկ-գիշեր
Եվ կամբաստանե Քու առջևդ, Տե՛ր,
Կուզեմ ազատվիլ հոգեկան այս խռովքեն
Ու թիթեռի պես թեթև ըլլալ մշտորեն:

3. Ծարաված սրտով աղբյուրիդ կուգամ,
Քաղցած ու հոգնած՝ ահա Քեզի կուգամ,
Ճաշակել կուզեմ երկնային մանանայեդ
Ու խմել կենաց հավիտենական ջուրեն:

4. Քու հզոր ձեռքովդ վերցուր զիս տիղմեն
Եվ ազատե զիս մեղքի այս փոսեն:
Գողգոթայի խաչին վրա թափված արյամբ
Թողություն շնորհե՛, ո՛վ իմ Աստվածս օրհնյալ: